

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»  
ԻԱՄ խորհրդի  
17/11/2010թ թիվ 25-Լ որոշմամբ

Փոփոխված է 20/05/2011թ թիվ 56-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»  
ԻԱՄ խորհրդի նախագահ

----- Անդրանիկ Նորեկյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է  
(վերջին փոփոխությունը գրանցված է)  
ՀՀ կենտրոնական բանկում

«01» հունիսի 2011թ  
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

----- Արթուր Զավադյան

**ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-010**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ**

(ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՀԱՆՁԻ)

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերությունները անձամբ կամ լիազորված անձանց կամ ապահովագրական գործակալների միջոցով ԱՊՊԱ պայմանագիր (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով նախատեսված «տարանցիկ փոխադրում» և «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմներով, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների առևտրով զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից վաճառքի համար Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր) կնքելիս պարտավոր են նախքան ԱՊՊԱ պայմանագիր կնքելը ապահովադրին (նրա կողմից լիազորված անձին) տրամադրել Հավելվածով սահմանված փաստաթուղթը և պահանջել մանրամասն ծանոթանալուց հետո ստորագրել այն՝ նշելով անունը, ազգանունը և ստորագրման ամսաթիվը: Ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) կողմից ստորագրված փաստաթուղթը պահվում է ապահովագրական ընկերության մոտ՝ ԱՊՊԱ պայմանագրի՝ ապահովագրական ընկերության օրինակին ամրացված ձևով:

2. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերությունները իրենց դիմած անձին վերջինիս համար նախընտրելի պայմաններով ԱՊՊԱ պայմանագրի կնքումը մերժելու դեպքում պարտավոր են տվյալ անձի գրավոր դիմումը ստանալու պահից սկսած առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ անձին գրավոր պատասխանել մերժման մասին՝ նշելով նաև մերժման հիմնավորումները:

**ՀԱՎԱՍՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հավաստում եմ, որ

1. տեղեկացված եմ և լիովին գիտակցում եմ, որ ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրված է տվյալ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվությունը, այսինքն՝ հատուցվելու են տվյալ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով երրորդ անձանց և նրանց գույքին պատճառված վնասները և *չեն հատուցվելու տվյալ ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասները:*
2. տեղեկացված եմ, որ **իրավունք ունեմ** ԱՊՊԱ պայմանագիրը կնքել 3 ամսից մինչև 1 տարի ժամկետով և տեղյակ եմ յուրաքանչյուր ժամկետի ընտրության դեպքում ապահովագրավճարների մեծության մասին: Հավաստում եմ, որ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետի ընտրությունը կատարվել է իմ կողմից:

\_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

\_\_\_\_\_ (ստորագրություն, ամսաթիվ)